

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Թաիլանդի Թագավորություն (Բանգկոկ) գործուղման արդյունքների մասին

**1. Անունը, ազգանունը.**

Ժաննա Անդրեասյան

**2. Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

**3. Գործուղման վայրը և ժամկետները.**

Թաիլանդի Թագավորություն (Բանգկոկ), 2019 թվականի նոյեմբերի 25-30-ը

**4. Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողով

**5. Գործուղման նպատակը /աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.**

Պեկին+25 տարածաշրջանային վերանայման հանդիպման, ինչպես նաև «Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների երկխոսություն գենդերային հավասարության և կանանց հզորացման վերաբերյալ» թեմայով աշխատաժողովին մասնակցություն, ելույթներ աշխատաժողովին և դիտարկմանը, երկկողմ հանդիպումներ մասնակից երկրների պատվիրակությունների հետ՝ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի կոմիտեում ՀՀ համանախագահության շրջանակներում անելիքների քննարկման, փոխադարձ համագործակցության նպատակով:

**Քննարկված թեմաները.**

Քննարկված թեմաներն էին գենդերային հավասարության ապահովման հնարավորությունները հետևյալ հիմնական ուղղություններով՝ կանանց ներգրավվածություն որոշումների կայացման գործընթացում, սոցիալ-տնտեսական հզորացում, շրջակա միջավայրի պահպանություն, գենդերային հիմքով բռնության և խտրականության դեմ պայքար, աղքատության հաղթահարում: Բոլոր ոլորտներում ներկայացվում էին հիմնական խնդիրները, հաջող փորձը, առաջիկա անելիքների ուղղությունները:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**  
Կազմակերպվել են հանդիպումներ Ֆրանսիայի, Չինաստանի, Իրանի պատիվրակությունների հետ, երկու ելույթ են ունեցել «Հյուսիսային և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանների երկխոսություն գենդերային հավասարության և կանանց հզորացման վերաբերյալ» թեմայով աշխատաժողովին և Պեկին+25 տարածաշրջանային վերանայման հանդիպման՝ ներկայացնելով ՀՀ հանձնառությունը՝ առաջ տանել օրակարգը երկրում և առաջնորդել տարածաշրջանում: Ներկայացրել են Հայաստանի Հանրապետության փորձն ու հանձնառությունը՝ կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման, Հայաստանում աղքատության վերացման և սոցիալական պաշտպանության բարելավման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը, ինչպես նաև անդրադարձել Հայաստանում բարձր տեխնոլոգիաների բնագավառում աղջիկ երեխաների ակտիվ ներգրավվածությանը, տարբեր մարզերում աղջիկների ֆուտբոլային թիմերի ձևավորմանը:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**  
Համաժողովի ավարտին ընդունվել է հռչակագիր, որին Հայաստանի Հանրապետության կողմից կողմ է քվեարկվել: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Ֆրանսիայի պատվիրակության հետ՝ ակտիվորեն ներգրավվել ՀՀ-ն հավասարության սերունդ հարթակի ներսում գործողությունների նախատեսվող վեց կոալիցիաներից որևէ մեկը առաջնորդելու համար՝ հիմք վերցնելով կանայք, խաղաղություն, անվտանգություն թեմայով, ինչպես նաև մոդելային դիտարկելով թավշյա հեղափոխությունից հետո կառավարություն-քաղաքացիական հասարակություն համագործակցության փորձառությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև տարածաշրջանային մեկ հանդիպում իրականացնել Հայաստանի Հանրապետությունում՝ հավասարության սերունդ հարթակի շրջանակներում՝ Ֆրանսիայի գենդերային հավասարության նախարարի մասնակցությամբ 2020թ" մայիսին ֆրանկոֆոն երկրների շրջանակներում ՀՀ-ում նախատեսված համաժողովի շրջանակներում:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**  
Առաջարկվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ սերտ համագործակցությամբ շարունակել աշխատանքները ՀՀ՝ հավասարության սերունդ հարթակում ընդգրկման ուղղությամբ և նշված տարածաշրջանային քննարկումը ՀՀ-ում կազմակերպելու ուղղությամբ, ինչպես նաև շարունակել

Նախապատրաստական աշխատանքները 2020 թվականի մարտին Նյու Յորքում  
նախատեսվող համաժողովին ՀՀ կողմից քննարկումների կազմակերպման  
ուղղությամբ:

X

---